# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 53-Ա

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31.08.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Գեղամասար համայնքի ավագանու 31.08.2021 թվականի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

1.Գեղամասար համայնքի Արեգունի, Ավազան, Արփունք, Սոթք, Կութ, Նորաբակ և Գեղամասար բնակավայրերում լուսավորության ցանցերի կառուցման ծրագիրը ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի <<Կայուն համայնքներ>> ծրագրով իրականացնելուն հավանություն տալու հարցը:

2.<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի>> հետ համատեղ Գեղամասար համայնքում իրականացվող <<Գեղամասար համայնքի հանրային ծառայությունների բարելավման և գյուղատնտեսության խթանման>> ծրագրին հավանություն տալու հարցը:

3.<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի>> հետ համատեղ Գեղամասար համայնքում իրականացվող <<Գեղամասար համայնքի էներգախնայողության>> ծրագրին հավանություն տալու հարցը:

4.<<Է$Արվի Մասրիկ>> ՓԲԸ-ին պատկանող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու հարցը:

5.<<Գեղամասար համայնքի Սոթք գյուղի մանկապարտեզ>> և <<Գեղամասար համայնքի Տրետուք գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու

համար մրցութային հանձնաժողովի կազմում ավագանու անդամի թեկնածություն առաջադրելու հարցը:

6.2021 թվականի սեպտեմբերի 01-ի՝ գիտելիքի օրվա կապակցությամբ աշակերտներին նվերներ գնելու համար գումար հատկացնելու հարցը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 54-Ա

### ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԳՈՒՆԻ, ԱՎԱԶԱՆ, ԱՐՓՈՒՆՔ, ՍՈԹՔ, ԿՈՒԹ, ՆՈՐԱԲԱԿ ԵՎ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ <<ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ>> ԾՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի <<Կայուն համայնքներ>> ծրագրով համայնքի ներդրումը կրճատվում է 20 տոկոսով (40 տոկոսի փոխարեն),

#### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել Արեգունի, Ավազան, Արփունք, Սոթք, Կութ, Նորաբակ բնակավայրերում լուսավորության ցանցերի կառուցման ծրագրերը Արեգունի, Ավազան, Արփունք, Փոքր Մասրիկ, Կուտական, Սոթք, Կութ, Ազատ, Ճապվան, Նորաբակ, Գեղամաբակ, Ջաղացաձոր և Ճապչրեք բնակավայրերում լուսավորության ցանցերի կառուցման սուբվենցիոն ծրագրով իրականացնելու փոխարեն իրականացնել ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի <<Կայուն համայնքներ>> ծրագրով, քանի որ այդ դեպքում համայնքի ներդրում կազմում է 20 տոկոս (40 տոկոսի փոխարեն), այդ իսկ պատճառով թույլատրել վերը նշված ծրագրերի հետ ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի <<Կայուն համայնքներ>> ծրագրով իրականացնել նաև Գեղամասար համայնքի Գեղամասար գյուղի լուսավորության ցանցի և Սոթք գյուղի լուսավորության ցանցի մյուս հատվածի կառուցման ծրագրերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:և պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 55-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ>> ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ>> ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գեղամասար համայնքի ղեկավարի առաջարկությունը և ներկայացված ծրագիրը.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

1.Տալ հավանություն ՀՏԶՀ-ի և USAD-ի կողմից իրականացվող <<Գեղամասար համայնքի հանրային ծառայությունների բարելավման և գյուղատնտեսության խթանման>> ծրագրին:

2.Հաստատել նախաձեռնող խմբի կազմը (Նախաձեռնող խմբի նախագահ Հակոբ Վազգենի Ավետյան)՝ համաձայն հավելված 1-ի:

3. Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 219.200.000 ՀՀ դրամ, համայնքը պարտավորվում է կատարել ներդրում 21.920.000 (ընդհանուր գումարի 10 տոկոսը) ՀՀ դրամ, ապահովել տեխնիկաների պահպանությունը և շահագործումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 56-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ>> ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ>> ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գեղամասար համայնքի ղեկավարի առաջարկությունը և ներկայացված ծրագիրը.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

1.Տալ հավանություն ՀՏԶՀ-ի կողմից իրկանացվող ՄՆՏԶ <<Գեղամասար համայնքի էներգախնայողության>> ծրագրին:

2.Հաստատել նախաձեռնող խմբի կազմը (Նախաձեռնող խմբի նախագահ Հակոբ Վազգենի Ավետյան)՝ համաձայն հավելված 1-ի:

3.Համայնքը պարտավորվում է ներդնել ծրագրի ընդհանուր գումարի 5 տոկոսը, ապահովել ենթակառուցվածքի շահագործումը և այն չօտարել առաջիկա տասնհինգ տարում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 57-Ա

<<ԷֆԱրՎի Մասրիկ>> ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին կետի, 9-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներով.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

1.Սեփականության իրավունքով <<ԷֆԱրՎի Մասրիկ>> ՓԲԸ-ին պատկանող հողամասերի (հողամասերի չափ և նպատակայի ու գործառնական նշանակությունները համաձայն կից հավելվածի) նպատակային նշանակությունները փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի, էներգետիկայի գործառնական նշանակության՝ էլեկտրահաղորդման լարեր անցկացնելու համար:

2.Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 58-Ա

### <<ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈԹՔ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ԵՎ <<ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԵՏՈՒՔ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետը.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

1.<<Գեղամասար համայնքի Սոթք գյուղի մանկապարտեզ>> և <<Գեղամասար համայնքի Տրետուք գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ների տնօրենների մրցութային հանձնաժողովի կազմում առաջադրել համայնքի ավագանու անդամ Արմինե Ավետյանին, իսկ համայնքապետարանի աշխատակազմից՝ աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության առաջատար մասնագետ Անդրանիկ Հախումյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 59-Ա

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի՝ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.2021 թվականի սեպտեմբերի 01-ի՝ գիտելիքի օրվա կապակցությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքից 2021 թվականին առաջին դասարան գնացող բոլոր երեխաներին նվերներ գնելու համար յուրաքանչյուր երեխային համար հատկացնել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ՝ ըստ բնակավայրերի, որպես նվերներ գնելու համար անհրաժեշտ ծախս :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ